

ՎԱՀԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՊՐՈԲԱՅԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Այս հոդվածում ձևակերպված է պրոբացիայի ծառայության ներդրման հիմնախնդիրներն ու անհրա-
ժեշտությունը՝ ինչպես այդ ինստիտուտի պատմական զագացումների համատեքստում, այնպես էլ մի-
ջազգային իրավական կարգավորումների և արտասահմանյան երկրների փորձի հաշվառմամբ:

*Հիմնաբառեր- պրոբացիա, պրոբացիայի ծառայություն, այլընտրանքային պատիժ, միջազգային
փորձ, միջազգային իրավական կարգավորում:*

Ժամանակակից աշխարհի առաջադեմ փորձը վկայում է պրոբացիայի ծառայության կարևորու-
թյան ու անհրաժեշտության մասին: Ազատագրկու-
մից բացի այլընտրանքային պատիժների քաղա-
քակիրթ համակարգի ներդրումը մի կողմից, հնա-
րավորություն կտա սահմանել իրավախախտում
կատարած անձանց համար այլընտրանքային
պատիժների ավելի մարդասիրական և առաջադի-
մական եղանակներ, մյուս կողմից, երաշխավորել
պատժի անխուսափելիության սկզբունքի արդյու-
նավետ իրացումը՝ հնարավորություն տալով ուղղել
և վերադաստիարակել առավել ևս ոչ ծանր ու
առանձնապես ծանր հանցագործություն կատա-
րած անձին առանց ազատագրկման այլընտրան-
քային պատժի կիրառման միջոցով:

Այս համակարգի ստեղծման հիմնական գրա-
վականներից մեկը հենց Հայաստանի Հանրապե-
տությունում պրոբացիայի ծառայության համա-
կարգի ներդրումն է՝ միջազգային իրավական կար-
գավորումներով սահմանված չափորոշիչների և մի-
ջազգային փորձի հաշվառմամբ:

Այլ ընտրանքային պատժի կիրառում իրակա-
նացնող պրոբացիայի ծառայությունը հանդիսա-
նում է ժամանակակից պետությունների իրավա-
կան համակարգերի կարևորագույն ինստիտուտ-
ներից: Թերևս, անհրաժեշտ է նշել, որ, ինչպես Հա-
յաստանի Հանրապետությունում, այնպես էլ
առանձին երկրներում դեռևս այն չի ներդրվել, սա-
կայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ ինստի-
տուտի ներդրումն առավելապես պայմանավորված
է հենց այդ երկրների իրավական միջավայրի և
ավանդույթների առկայությամբ, որոնք էական ազ-
դեցություն են ունենում ոչ միայն այդ ինստիտուտի
ձևավորման և զարգացման, այլև դրա արդյունա-

վետ կիրառման պայմանների վրա:

Հետևաբար, տվյալ ինստիտուտի էությունն
անհրաժեշտ է բացահայտել արտասահմանյան
երկրների իրավական կարգավորումների համեմա-
տական վերլուծության ու գիտական մոտեցումնե-
րի համադրման, ինչպես նաև պատմական զար-
գացման համատեքստում դրա օբյեկտիվ միտում-
ների հետազոտման համատեքստում:

Այսպես, արտասահմանյան երկրներում պրո-
բացիայի կամ համանման այլ ծառայության ի
հայտ գալը պայմանավորված է այլընտրանքային
պատժի կիրառման կամ պայմանական դատա-
պարտման հետ: Դրա՝ որպես քրեաիրավական
ինստիտուտի գիտական մշակումը սկսվել է XIX
դարի վերջերին¹: Իհարկե, այդ դարաշրջանում
բանտային ազատագրկումները ուղեկցվել են
դրանց կիրառման նկատմամբ հասարակական
ընդվզումներով, այնուամենայնիվ, գիտական հե-
տազոտությունները վկայում են, որ դեռևս այդ ժա-
մանակահատվածից սկսած կարևոր նշանակու-
թյուն են տրվել այլընտրանքային պատժի կիրա-
ռումն կամ պայմանական դատապարտումն իրա-
կանացնող ծառայությունների գործունեության
հիմնախնդիրներին:

Սկզբնական շրջանում գիտական հանրության
շրջանակներում առաջ քաշվեց այն թեզը, ըստ որի՝
ա) ազատագրկում կիրառելը ցանկացած կերպ չի
համապատասխանում պատժի նպատակներին, բ)
այն չունի որևէ զսպողական նշանակություն, գ)
առավել հաճախ այն նեգատիվ ազդեցություն է ու-
նենում դատապարտվածների վրա և դ) նման պա-
տասխասանատվության կիրառումն ինքնին անն-
պատակ ու ավելորդ պատժատեսակ է հանդիսա-
նում²:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Գերմանացի իրավագետ Ֆրանց Ֆոն Լիստի կարծիքով, եթե բանտում հանցագործին երկարաժամկետ պահելը դառնում է նրա համար սովորական երևույթ, ապա կարճաժամկետ ազատազրկումն անօգուտ է, նույնիսկ ավելի խորքային վնաս է պատճառում իրավակարգին, քան անպատժելիությունն ընդհանրապես: Այսինքն, մի դեպքում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար ազատազրկումը հանդիսանում է կանխարգելիչ միջոց, իսկ մեկ այլ դեպքում նվազ ծանրության կամ միջին ծանրության հանցագործությունների համար ազատազրկումը դառնում է ոչ միայն անհմաստ, այլև այն վնասներ է պատճառում պետությանը, հասարակությանը, ընտանիքներին և չի նպաստում արդարադատության բուն բովանդակության կենսագործմանը:

Այդ ժամանակներից սկսած պրոբացիայի կամ նմանատիպ ծառայությունների գոյության անհրաժեշտությունը չի կորցրել իր արդիականությունը նաև մեր օրերում:

Այս հարցն իր պատմական զարգացումների համատեքստում օրակարգային քննարկման է ենթարկվել դեռևս Լոնդոնի 1872 թվականի, Սանկ-Պետերբուրգի 1890 թվականի և Հռոմի 1885 թվականի Բանտային միջազգային կոնգրեսներում, ինչպես նաև Բրյուսելի 1889 թվականի Միջազգային իրավունքի միության համագումարում⁴: Հենց նման լայնածավալ ու բուռն բանավեճերը բերեցին նրան, որ այլընտրանքային պատժամիջոցներ կիրառող մարմինների անհրաժեշտությունը կարևորվեց, հատկապես կանանց, անչափահաս երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և առաջին անգամ ոչ ծանր կամ ոչ էլ առանձնապես ծանր հանցագործություն կատած անձանց հիմնախնդիրը այդ ժամանակաշրջանի տրամաբանությանը համահունչ:

Եվ այդ հիմնախնդրի լուծման անհրաժեշտությամբ պայմանավորվեց հենց XIX դարում մասն ինստիտուտների ներդրումը, որոնց կազմակերպման հիմքում դրվեց այն գաղափարը, ըստ որի, պատժի՝ սոցիալական արդարության վերականգնման նպատակով իրավախախտների նկատմամբ ազատազրկման կիրառումը խիստ անընդունելի է, հատկապես հանրության համար նվազ վտանգավորություն ունեցող արարքների մասով:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ տարբեր կերպ են ներկայացվում այդ ինստիտուտի բնույթը: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն դիտարկումը, որ սկզբնական շրջանում հենց եվրոպական երկրներում պրոբացիայի ծառայությունը ընկալվում էր որպես հանցանք կատարած անձանց

բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից պատիժ իրականացնելու միջոց, որոնց գործունեությունը հետագայում կանոնակարգվեցին և ներառվեցին քրեական արդարադատության օրենսդրությունում⁶:

Արդյունքում այն երկրներում, որտեղ պրոբացիայի ծառայությունը կայացել է, ուշադրություն է դարձվում ոչ թե անձի կողմից կատարված արարքի հանրության համար վտանգավորության հիմնահարցին, այլ այն սոցիալական և քրեածին խնդիրներին ու հանգամանքներին, որոնցով պայմանավորված է հենց անձի հանցածին վարքագիծը:

Այնուհետև, XX դարի 70-80 թվականներին Եվրոպական երկրներում նույնպես առանձնակի կարևորվեցին ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատժի կիրառման հիմնախնդիրները⁷: Հատկապես ազգային օրենսդրության առանձնահատկություններով պայմանավորված՝ առաջադրվեցին այլընտրանքային պատժների կիրառման բազմազան տարբերակներ: Այսպես, Շվեյցարիայում, Մեծ Բրիտանիայում փորձարկվեցին, այնուհետև օրենսդրությամբ ամրագրվեցին այսպես կոչված՝ «հասարակական աշխատանքները» (community service):

Այս օրինակին հետևեցին եվրոպական շատ երկրներ: Օրինակ, Ֆրանսիայում 1983 թվականի հունիսի 10-ին ընդունվեց հասարակական աշխատանքների կիրառման վերաբերյալ օրենքը: Իսկ Լյուքսեմբուրգի 1986 թվականի «Դատավճռի կատարումը կասեցնելու, հետաձգելու և պրոբացիայի մասին» օրենքով նախատեսվեց, որ դատապարտյալի նկատմամբ կարող է կիրառվել ազատազրկման փոխարեն այլընտրանքային պատժ, եթե առկա է դատապարտյալի համաձայնությունը: Այս ակտով նախատեսվում է նաև ազատությունից զրկելու հետ չկապված այլ բնույթի այլընտրանքային պատժների կիրառման հնարավորություն՝ պրոբացիայի ծառայությանը վերապահելով վերասոցիալականացման գործառույթ: Իսկ Ավստրիայում 1987 թվականին քրեական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում հանցագործության հետաքննության փուլում ներդրվեց «նախնական պրոբացիայի ինստիտուտը» որպես պրոբացիայի այլընտրանքային տեսակ:

Անցյալ դարաշրջանում Լեհաստանի քրեական քաղաքականության իրականացման կարևոր տարրերից էր նաև ազատազրկման հետ չկապված պատժների կիրառման նոր մեթոդների ներդրումը: Այդ առումով, նույն դարաշրջանի 90-ական թվականներին ներդրվեց արբիտրաժը, որի գործունեության արդյունքում դատախազի և դատապարտյալի միջև ձեռք էր բերվում համաձայնություն՝ վերջի-

նիս նկատմամբ այլընտրանքային պատժատեսակ կիրառելու մասով:

Այնուհետև, Շվեդիայում 1988 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած օրենքով ներդրվեց այսպես կոչված «բուժում պայմանագրով» պրոբացիայի ձևը: Այս պրոբացիայի կիրառման հիմքում դրվեց այն գաղափարը, ըստ որի, եթե թմրամոլ դատապարտյալը համաձայնվում է այն պայմանով, որ ազատության մեջ գտնվելով նա կբուժվի, ապա այդ դեպքում՝ դատարանը ազատագրվման փոխարեն նախատեսում է այլընտրանքային պատժատեսակ: Ընդ որում, թմրամոլության բուժման տեղն ու կարգը որոշվում է դատապարտյալի և դատախազի փոխհամաձայնությամբ:

Իտալիայում ազատագրվման հետ չկապված պատժատեսակ է տնային կալանքը: Այդ պատժատեսակը կիրառվում է բացառապես հաշմանդամների, ծեղրների, անչափահաս երեխաներ ունեցող կանանց, հղի կանանց և հիվանդություն ունեցող անձանց նկատմամբ:

Չեխիայի քրեական օրենսդրությամբ 1990-ական թվականներին ներդրվեց այլընտրանքային պրոբացիայի այնպիսի ինստիտուտներ, որոնց վերահսկողական գործունեությունն ուղղված էր քրեական հետապնդումից պայմանականորեն ազատվածների, պատիժ չկիրառված և այլընտրանքային այլ պատժով կիրառված անձանց վարքագծի կանոններին հետևելուն⁸:

Պրոբացիայի ծառայության արդյունավետության ապահովման կարևոր երաշխիքներից է այդ ծառայության գործառույթների սահմանումը: Այսպես, մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են եվրոպական երկրների պրոբացիայի ծառայության հիմնական և առանցքային համարվող հետևյալ գործառույթները. ա) հասարակական աշխատանքների կատարման կազմակերպում, բ) անձի վերաբերյալ սոցիալական հետգոտության իրագործում, գ) պրոբացիայի, որպես այլընտրանքային պատժի կիրառման կազմակերպում, դ) պայմանական դատապարտված անձանց վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում, ը) անձանց հատուկ մասնագիտական կրթության ուսուցման կամ վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ե) ընդհանուր և անհատական բնույթի կանխարգելիչ միջոցների կիրառում, զ) մեդիացիայի (հաշտության) գործընթացների և հանցագործության գոհերի պաշտպանության կազմակերպում և այլ գործառույթներ⁹: Ընդ որում, որպես կանոն, այս գործառույթներով օժտված են այն ծառայությունները, որոնք պետական կառավարման համակարգում հանդիսանում են որպես ինքնուրույն մարմին-

ներ¹⁰:

Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս եվրոպական երկրների պրոբացիայի ծառայությունը կարգավորող օրենսդրության վերլուծությունը, դրանցում ամրագրված նորմերը համահունչ են Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից անդամ-պետություններին ուղղված CM/Rec 2010/1 հանձնարարականով ընդունված պրոբացիայի կանոններին և գործնականում բոլոր երկրները ձգտում են ներդաշնակեցնել իրենց ազգային օրենսդրության նորմերը միասնական իրավական այդ չափորոշիչների հետ:

Միաժամանակ, պրոբացիայի ծառայության իրավական ապահովման և հիմնարար սկզբունքների կարգավորման տեսակետից անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային ժամանակակից կարգավորումների դերն ու նշանակությունը պետությունների իրավական համակարգի մշակման գործում:

Նախ, անհրաժեշտ է կարևորել Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1990 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների վերաբերյալ նվազագույն կանոնների մասին» թիվ 45/111 բանաձևը, որը հայտնի է «Տոկիոյի կանոններ» անվանումով: Այս բանաձևով ամրագրված կանոնները բովանդակում են ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառության հիմնական սկզբունքները, իրավական երաշխիքները և նպատակաուղղված են ապահովելու հասարակության ակտիվ մասնակցությունը արդարադատության իրականացմանը՝ խթանելով ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատժի կիրառությունը:

Մասնավորապես, բանաձևի 3-րդ կետով ամրագրված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ՝ ա) ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատժի կիրառման մասին որոշման ընդունումը վերապահված է դատարանին կամ իրավասու մարմնին միայն իրախախտում թույլ տված անձի դիմումի առկայության դեպքում, բ) եթե ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատժի կիրառման նախաձեռնությունը ցուցաբերում է իրավասու մարմնին, ապա այդ դեպքում անհրաժեշտ է իրավախախտում թույլ տված անձի համաձայնությունը, գ) ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատժի և դրա ապահովման ու կիրառման մեխանիզմները պետք է սահմանվեն բացառապես օրենքով, դ) իրավախախտում թույլ տված անձին պետք է վերապահել իր կողմից ազա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տությունից գրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժ կիրառելու մասով իրավական պաշտպանության իրավունք և այլն:

Այս բանաձևի կարևորությունը կայանում է նաև նրանում, որ ազատությունից գրկելու հետ չկապված պատիժների կիրառումն ապահովող անձնակազմին ներկայացվող պահանջների շրջանակում կարևորվում է նրանց մասնագիտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությունը, սոցիալական երաշխիքների նախատեսումը և այլն:

Պրոբացիայի ծառայության հետ կապված մի շարք սկզբունքային հարցեր կարգավորվել են նաև Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից անդամ-պետություններին ուղղված Rec (2010)1 հանձնարարականով «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոններ» վերտառությամբ: Այն յուրահատուկ ուղեցույց է պետությունների կողմից դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների ստեղծման ու պատշաճ գործունեության մասին: Նշված կանոնները կիրառելի են նաև այլ կազմակերպությունների նկատմամբ այնքանով, որքանով պրոբացիայի ծառայության խնդիրները ծառայողի կողմից իրականացնելիս՝ վերջինս կարող է փոխհարաբերվել պետական և այլ կազմակերպությունների հետ:

Այս հանձնարարականի կարևոր ու սկզբունքային հարցադրումներից է նաև այն, որ պրոբացիան դիտարկվում է որպես պետական իշխանության մարմինների պարտականություն, մույնիսկ այն դեպքերում, երբ այդ ծառայությունն իրականացնում են այլ կազմակերպությունները կամ կամավորները (կետ 9):

Անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ նշված կանոնները չեն գործում և չեն կարող գործել ինքնուրույն և առանձին վերցրած, քանի որ դրանք խիստ փոխկապված են անդամ-պետություններին ուղղված իրավական այլ երաշխավորություններով, հանձնարարականներով ու առաջարկություններով: Դրանք, ի վերջո, միջազգային իրավական յուրօրինակ հանձնարարականներ են այդ պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության համար՝ ելնելով նրանց ինչպես իրավակիրառ պրակտիկայի, այնպես էլ իրավաբաղաբական համակարգի առանձնահատկություններից: Այս առումով, հիշատակված Կանոնները ևս ամրագրում են, որ դրանք անհրաժեշտ է մեկնաբանել «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին» եվրոպական կանոնների վերաբերյալ թիվ Rec (92)16 երաշխավորության համատեքստում (մաս I): Ավելին, նշված կանոններին լրացնում են «Պատիժների

կամ միջոցների կատարման հետ առնչվող անձնակազմի վերաբերյալ» թիվ Rec (97)12, «Քրեական գործերով միջնորդության վերաբերյալ» թիվ Rec (99)19, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec (2000)22, «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Rec (2003) 22, «Քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից ցմահ ազատազրկվածների և երկարաժամկետ ազատազրկվածների պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ» Rec (2003)23, «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» Rec (2006)2, «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec (2006)13 հանձնարարականների համապատասխան դրույթները, որոնք պետք է մեկնաբանվեն և հետագայում կիրառման ենթարկվեն հենց թվարկված փաստաթղթերի համատեքստում: Այսինքն, պրոբացիայի ծառայության համակարգին առնչվող և ձևավորվող օրենսդրությունը պետք է մի կողմից հաշվի առնի միջազգային իրավական կարգավորումների պահանջները, իսկ մյուս կողմից՝ այն, հիմք ընդունելով, զարգացնի ներպետական օրենսդրությունը:

Ներկայումս գրեթե բոլոր եվրոպական երկրներում պրոբացիայի ծառայության վերաբերյալ օրենսդրական դրույթները նախատեսված են քրեական և քրեական դատավարական օրենսդրությամբ (Բելգիա, Էստոնիա, Չեխիա, Ֆրանսիա, Հունգարիա, Լատվիա, Մոլդովա, Հոլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ռումինիա) կամ առանձին իրավական ակտերով (Իռլանդիա, Մեծ Բրիտանիա): Կան նաև երկրներ, որտեղ քրեական արդարադատության համակարգում պրոբացիայի ծառայության դերը նախատեսված է միայն քրեական դատավարության օրենսգրքով:

Թերևս, այդ իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել առանձին երկրներում պրոբացիայի ծառայության ինստիտուցիոնալ կամ առանձին օրենսդրությամբ կանոնակարգման հնարավորությունն ու կարևորությունը: Ելնելով վերոգրյալից՝ միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ պրոբացիայի ծառայության տարբեր կերպ իրավական կարգավորումներն այս ամենից չեն փոխում այդ ծառայության բովանդակությունը, ինչպես նաև պրոբացիայի ծառայողի իրավական կարգավիճակը:

Այս առումով, Հայաստանի Հանրապետությունում ձևավորված կամ ձևավորվելիք օրենսդրությունը ևս կոչված է կարևորելու պրոբացիայի գործունեության նշանակությունը, այդ թվում՝ միջազգային իրավական կարգավորումների ու փորձի

համատեքստում:

Միջազգային ներպետական օրենսդրությունը վերլուծելիս աներկբայորեն գալիս ենք այն եզրահանգման, որ ցանկացած պետական մարմնի համար կարևոր խնդիր ու պահանջ է դիտարկվում տվյալ մարմնի պետաիրավական կարգավիճակի հստակ սահմանումը և այդ կարգավիճակի տարրերի վերլուծությունը, քանզի հենց պետական մարմնի կարգավիճակի սահմանմամբ է անհրաժեշտ պարզել դրա գործունեության շրջանակների առանձնահատկությունները:

Ընդհանրացնելով և հաշվի առնելով միջազգային կարգավորումների վերլուծությունը և փորձը՝ կարելի է ներկայացնել պրոբացիայի ծառայության կազմակերպարավական բնույթի նախնական հետևյալ գործընթացները.

1) սահմանել հանրային այն ոլորտները, որոնց շրջանակներում իրականացվում է պրոբացիայի գործունեությունը կամ առնչվում է այդ ծառայության հետ,

2) մշակել և ընդունել պրոբացիայի ծառայության կազմակերպման, գործունեության կարգն ու երաշխիքները սահմանող օրենսդրությունը՝ հաշվի առնելով այդ ոլորտի առանձնահատկությունները,

3) օրենսդրական կարգավորումների միջոցով սահմանել այդ ծառայության լիազորությունների, նպատակների, խնդիրների, գործառույթների ու պատասխանատվության շրջանակները և սահ-

մանները,

4) սահմանել պրոբացիայի ծառայության և պետական այլ մարմինների, կազմակերպությունների ու անձանց միջև փոխհարաբերությունների առանձնահատկությունները, իրավական կարգավորման ոլորտներն ու սահմանները,

5) սահմանել պրոբացիայի ծառայության գործունեության օբյեկտները և սուբյեկտները, ինչպես նաև այլ գործոններ, որոնք կարևոր նշանակություն ունեն պրոբացիայի ծառայության կազմակերպման և արդյունավետ գործունեության համար:

Համադրելով կարելի է եզրահանգել, որ չնայած այն հանգամանքին, որ իրավական տեսանկյունից առկա են ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կիրառման տարբեր ձևեր ու եղանակներ, այդուհանդերձ, պրոբացիայի ծառայությունը նոր ինստիտուտ է, որի գործունեությունն ուղղված պետք է լինի ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատժի՝ որպես յուրահատուկ համերաշխության ու կանխարգելիչ միջոցի կիրառմանը:

www.journal.lawinstitute.am

¹ Տե՛ս Անհրաժեշտ է նշել, որ այլ ընտրանքային պատժի կիրառումն ու պայմանական դատապարտման իրականացումն ունեն շատ ավելի վաղ դրսևորումներ, որոնք, սակայն, հասկանալի պատճառներով միշտ չէ, որ հին հասարակարգերում ենթարկվել են հստակ իրավական կանոնակարգման: Մասնավորապես, դեռևս ստրկատիրական, ապա նաև ֆեոդալական հասարակարգերում կատարված հանցագործությունների համար՝ բացի ազատագրկումից, կիրառվում էին նաև հարկադիր աշխատանքի և դրամային կամ ապրանքային տույժի պատժատեսակներ:

² Տե՛ս Шатанкова Е.Н. Условное осуждение и пробация за рубежом: сравнительно-правовой анализ, дисс., канд. юрид. наук, М.: 2008, С. 13-14.

³ Տե՛ս Ф.Лист. Задачи уголовной политики. Преступление как социально-патологическое явление, М.: 2004. С. 38.

⁴ Տե՛ս Шатанкова Е.Н. Նույն աշխ. էջ. 14:

⁵ Տե՛ս Չնայած այն հանգամանքին, որ պրոֆեսոր Ա.Ա. Պիոնտկովսկու կարծիքով այդ ինստիտուտն առաջին անգամ ձևավորվել է 1869 թվականին Հյուսիսային Ամերիկայում, սակայն առանձին իրավագետների պնդմամբ, նման հաստատություններ առաջին անգամ ստեղծվել են Անգլիայում 1820 թվականին, ինչը պայմանավորել է այն հիմնավորման հետ, որ պայմանական ազատագրկման առաջին դրսևորումները տեղ են գտել այդ երկրում:

⁶ Տե՛ս Хуторским Н.Б. Международные стандарты и организация деятельности службы пробации за рубежом //

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Материалы Международной конференции: «Развитие пенитенциарной системы в Кыргызской Республике: результаты, проблемы и перспективы». Бишкек, 2003, С.45.

⁷ St'u Дворянское И.В., Сергеева И.В., Баталии Д.Е. Применение альтернативных видов наказания в Западной Европе, США и России (сравнительно-правовое исследование). М.: 2004. С. 75-77.

⁸ Նույն աշխ. մեջ, էջ 77:

⁹ St'u Van Kalmhout A. Report for the PC-CP meeting.- 11 December 2007. - P. 14-15.

¹⁰ St'u Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի, Հունգարիայի, Գերմանիայի, Դանիայի, Իռլանդիայի, Ֆրանսիայի և այլ երկրների պրոբացիայի ծառայություններն ինքնուրույն մարմիններ են և չեն ներառվում քրեակատարողական մարմինների կառուցվածքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման վերաբերյալ հայեցակարգը, <http://www.moj.am/>
2. Дворянское И.В., Сергеева И.В., Баталии Д.Е. Применение альтернативных видов наказания в Западной Европе, США и России (сравнительно-правовое исследование). М.: 2004. 277 с.
3. Лист Ф. Задачи уголовной политики. Преступление как социально-патологическое явление, М.: 2004. 238 с.
4. Материалы Международной конференции: «Развитие пенитенциарной системы в Кыргызской Республике: результаты, проблемы и перспективы». Бишкек, 2003, 434 с.
5. Van Kalmhout A. Report for the PC-CP meeting.- 11 December 2007. P. 115.

Ваган Багдасарян

Аспирант Европейской региональной образовательной академии

ՔԵԶԻՍԵ

Проблемы внедрения службы пробации в контексте ее исторического развития, международно-правового регулирования и исследования международного опыта

В статье сформулированы проблемы и необходимость внедрения службы пробации как в контексте ее исторического развития, так и с учетом международно-правового регулирования и опыта зарубежных стран.

Ключевые слова: пробация, служба пробации, альтернативное наказание, международно-правовое регулирование, международный опыт.

Vahan Baghdasaryan

Post-graduate of the European Regional Educational Academy

SUMMARY

Probation services investment in the research context of historical developments, international legal regulations and international experience

In this article the probation service's investment problems and necessity in the context of the institute's historical developments as well as international legal regulations and the experience of the foreign countries are formulated.

Keywords: probation, probation service, alternative punishment, international legal regulation, international experience.